<ԽՈՍՔ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՇԵՔՍՊԻՐԻ ՄԱՀՎԱՆ 300-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ>

Հարգելի հայրենակիցներ.

Անգլիայի մեծ մարդկանցից մինը, Կարլեյլ, ասում է. Անգլիական ցեղը մեծացել, ծավալվել, ցրվել է աշխարհքով մին՝ Մեծ Բրիտանիայից սկսած մինչև Ամերիկա, Աֆրիկա, Հնդկաստան, Ավստրալիա և շատ հեռավոր կղզիներ։ Եվ շատ տեղեր հաստատել է նույնիսկ ինքնուրույն իշխանություններ։ Այլևս ոչ մի թագավոր չի կարող իր գայիսոնի տակ ամփոփել անգլիական ցեղը։ Միակ թագավորը, որ կարողանում է իր իշխանությունը տարածել համատարած անգլիական ցեղի վրա ու ամեն տեղ պահպանել նրա ազգային ամբողջությունը, դա Շեքսպիրն է։

Սակայն միայն անգլիական ցեղը չի, որ շաղկապում ու համերաշխության մեջ է պահում Շեքսպիրը։ Նա միաժամանակ բոլոր ժողովուրդներին է մոտեցնում՝ ինչպես անգլիական ազգին, էնպես էլ իրար։ Եվ արդեն սրա մեջն է բանաստեղծության ու առհասարակ գեղարվեստի կախարդական ուժը՝ ամեն մեկի բույրն ու հրապույրը պահպանելով հանդերձ, ամենքին ի մի բերել և բազմազանությունից ստեղծել ներդաշնակ ամբողջություն։

Բայց միայն Շեքսպիրը չի, որ հանդես է բերում էս մեծ ու հրաշալի կարողությունը։ Էսպես է նաև նրա ծնող ժողովուրդը, անգլիական ազգը, որ կարողացել է իրեն հետ սերտ շաղկապել շատ տարբեր ժողովուրդներ աշխարհքի ամեն մի ծայրում, և դուք նույնիսկ էսօրվա հեռագիրներում կարդացիք, թե ինչպես հեռավոր Զելանդիայից, Ավսարալիայից ու Հնդկաստանից բազմատարազ ու բազմալեզու զորքեր են գալիս՝ Եվրոպայի ցամաքում կռվելու Անգլիայի թշնամիների դեմ, ինչպես իրենց սեփական թշնամիների դեմ, և Անգլիայի հաղթանակը իրենց հաղթանակն են համարում, Անգլիայի բարօրությունը իրենց բարօրությունն են համարում, որովհետև, հիրավի, էդպես է իրականության մեջ, էդպես է կապել իրեն հետ Անգլիան։

Հարգանք անգլիական մեծ ազգին, որ աշխարհքին ոչ միայն մեծ հանճարներ է տվել, այլև հանճարեղ կարգեր, և որ առաջինն է հայտարարել մարդկությանը, թե անձեռնմխելի է մարդու անձնավորությունը, և էսպեսով էլ միշտ ազատ ու արձակ ճանապարհ է բաց արել հանճարների ու կուլտուրայի համար։ Հարգանք մեծ ազգին ի

դեմս ներկա գտնվող արժանավոր զավակների և մեր պատվավոր հյուրերի՝ պարոնայք Բրքստրնի, Բեքհաուզի և Հաճքինի։